ՕՍԼՈՅԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԵՏՔԸ

Որպես Կայուն զարգացման առաջընթացի քայլեր մշակվել են մի շարք մեթոդներ, որոնք հնարավորություն են տալիս երկրներին (նաև շրջաններին, քաղաքներին և նույնիսկ առանձին տնային տնտեսություններին) չափել իրենց էկոլոգիական հետքը, բնական պաշարների սպառման իրենց մակարդակը համեմատելով դրանց առկա քանակի հետ (օրինակ, խմելու ջրի հասանելիությունն ու դրա սպառումը):

2003-ին Օսլոն ստացավ «Կայուն քաղաք» միջազգային մրցանակը: Որպես առանձնակի արժեքավոր ձեռքբերում, նշվում է քաղաքի էկոլոգիական խնդիրների լուծման գործում համակարգային մոտեցման ներդրումը, քաղաքի համալիրային կողմնորոշումը Կայուն զարգացմանը: Քաղաքում իրականացված ծրագրերի շնորհիվ նշանակալից հաջողություններ գրանցվեցին էներգաարդյունավետության բարձրացման, թափոնների ռացիոնալ օգտագործման հարցերում, անցում կատարվեց էկոլոգիապես մաքուր տրանսպորտի, ջերմոցային գազերի և արտանետումների կրճատմանը: Գործընթացի շնորհիվ քաղաքը յուրաքանչյուր տարի սկսեց տնտեսել մոտ 4մլն եվրո: Ծրագրի իրականացմանը մասնակցում էին հասարակության բոլոր հատվածները: Ավելի քան 6000 ընտանիք քաղաքապետարանի հետ կնքել էր Էկոլոգիական պարտավորությունների վերաբերյալ պայմանագրեր, որոնց համաձայն նշված ընտանիքները առավելագույնս կիրառում են կայուն սպառման սկզբունքները: Մշակվել են էկոլոգիական հետքի թվային տվյալների ստացման հաշվիչներ:

https://www.footprintcalculator.org/home/en